ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
CHAIRMAN OF CENTRAL ELECTORAL COMMISSION OF THE REPUBLIC OF ARMENIA

N 01-102
«14» 03 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ազգային ժողովի մեծարգո նախագահ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ կից ներկայացնում եմ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին» հաղորդումը, որը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի համաձայն տեղադրվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Հարգանքով՝

Տ. Մուկուչյան

ՀՀ, ք. Երևան, 0009, Գ.Քոչարի 21ա, հեռ.՝ /374 10/ 54 35 03, ֆաքս՝ /374 10/ 54 35 23
21a G.Kochar Str., AM 0009, Yerevan, Armenia, Tel.: /374 10/ 54 35 03, fax: /374 10/ 54 35 23
Էլ. փոստ/E-mail: cec@elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ
2020-2021

www.elections.am

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐ

www. elections.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ*** 5

2. ***ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** 8

2.1. Ընտրությունների վարչարարությունը 10

2.2. Մասնագիտական դասընթացների կազմակերպում 12

2.3. Տեխնիկական սարքավորումների կիրառումն ընտրական գործընթացում 14

2.4. Հանրային իրազեկում և հրապարակայնություն 16

2.5. Թեկնածուների առաջադրումը, գրանցումը 18

2.6. Քվեարկություն 19

2.7. Քվեարկության արդյունքերի ամփոփում 20

2.8. Քվեարկության արդյունքերի վերահաշվարկ 20

2.9. Դիմում բողոքների քննարկում 21

2.10. Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը 22

3. ***ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2020-2021ԹԹ.*** 24

3.1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 2020 թվական 24

3.2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 2021 թվական 31

3.3. Ընտրական վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ 34

3.4. Մասնագիտական դասընթացների կազմակերպում 35

3.5. Տեխնիկական սարքավորումների կիրառումը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ 37

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության մասին, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 132-րդ հոդվածի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր երկրորդ տարվա ապրիլի 1-ը, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրություններից հետո՝ մեկամսյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաղորդում»: Նշված իրավանորմից հետևում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդումը պետք է ներառի տեղեկատվություն, ըստ էության, իր երկու տարվա գործունեության մասին:

Փաստելով, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների հետ կապված իր գործունեության վերաբերյալ հաղորդումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացրել 2021 թվականին, որում մանրամասն ներկայացվել է ամբողջական հաշվետվություն և այն քննարկվել է սահմանված կարգով, ուստի սույն հաղորդման մեջ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների հետ կապված կներկայացվի հակիրճ տեղեկատվություն:

2020-2021 թվականների ընթացքում Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմակերպվել և անցկացվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ և ընդհանուր թվով 58 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Նշված համայնքներից 44-ը հանդիսանում են խոշորացված համայնքներ:

2020 թվականի ընթացքում «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան անցկացվելու էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե, որը չեղարկվեց[1] պայմանավորված նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակով:

[1] *ՀՀ Ազգային ժողովի 30.06.2020թ. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱԺՈ-003-Ն որոշում:*

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ

Հայաստանի Հանրապետության նախագահի 2020թ. փետրվարի 9-ի ՆՀ-32-Ն հրամանագրով 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 3-Ա որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը ու մեկնարկվեցին հանրաքվեի նախապատրաստման աշխատանքները:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 16.03.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 208-րդ հոդվածով և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, ինչպես նաև գործընթացի մյուս մասնակիցների կողմից դադարեցվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման նպատակով իրականացվող բոլոր աշխատանքները, գործընթացները և միջոցառումները:

Հանրաքվեի նախապատրաստման աշխատանքները դադարեցվեցին քվեարկության օրվանից քսան օր առաջ, և այդ պահի դրությամբ արդեն իսկ իրականացվել էր նախապատրաստման աշխատանքների գրեթե 90%-ը: Մասնավորապես,

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունվել էին իրավահարաբերությունները կանոնակարգող բոլոր անհրաժեշտ իրավական ակտերը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները, ինչպես նաև դրանցով սահմանված ձևաթղթերի օրինակելի ձևերն ու նմուշները զետեղվել էին հանձնաժողովի պաշտոնական կայքում.
- Կազմավորվել և սահմանվել էին հանրաքվեի տեղամասերն ու տեղամասային կենտրոնները, տեղամասային կենտրոններում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվել էին հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները.
- Մշակվել, տպագրվել և հրապարակվել էին գործընթացի բոլոր մասնակիցների (ընտրական հանձնաժողովների անդամներ, մասնագետներ, վստահված անձինք, դիտորդներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ) համար անհրաժեշտ ուսումնական նյութերը՝ ուղեցույցներ, ձեռնարկներ, հուշաթերթեր, պաստառներ, հանրային իրազեկման հոլովակներ և այլն.

- Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2020 թվականի փետրվարի 15-ին և 16-ին բոլոր մարզկենտրոններում և Երևան քաղաքում կազմակերպել և անցկացրել է լրացուցիչ ստուգարքներ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին որակավորման վկայականներ տրամադրելու համար: Ստուգարքներին մասնակցելու համար ներկայացվել է ընդհանուր թվով 6.100 հայտ, մասնակցել է 4.787 քաղաքացի, որոնցից 4.773-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ.

	2020 (փետրվար)				
Հայտատու	Ընդամենը	Մասնակցած	%	Ստացած	%
Քաղաքացիներ	3119	3110	99.71	3100	99.68
Կուսակցությունների կողմից	2981	1677	56.26	1673	99.76
Ընդամենը	**6100**	**4787**	**78.48**	**4773**	**99.71**

-



- Կազմավորվել էին տեղամասային ընտրական հանձնաժողովները և բոլոր 2008 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գումարվել էին առաջին նիստերը.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո հանրապետությունում և Երևան քաղաքում մեկնարկվեց տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների ուսուցման գործընթացը, որը անցկացվեց երկու օր՝ մարտի 14-ին և 15-ին.

- Մշակվել և տպագրվել էին էլեկտրոնային եղանակով քվեարկողների թվին համապատասխան անհատական ծածկագրեր պարունակող ծրարները և տրամադրվել իրավասու մարմիններին հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացի-ներին ուղարկելու համար.

- Քվեարկության ամբողջ ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը տեսանկարահանելու և համացանցով՝ ուղիղ ժամանակային ռեժիմում

հեռարձակվելու համար մասնագիտացված կազմակերպության հետ կնքվել էր համապատասխան պայմանագիր և ձեռք էին բերվել մի շարք ապրանքներ (սերվերներ, հիշողության քարտեր, հեռարձակման և տեսագրման արտոնագրեր և այլն): Կատարվել էին հսկայածավալ նախապատրաստական աշխատանքներ, թվով՝ 1069 տեղամասերում տեղադրվել էին տեսախցիկներ, իրականացվել էր ծրագրային ապահովման համակարգի տեղադրում և կարգաբերում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2020 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱԺՈ-003-Ն որոշման ընդունումից հետո, պայմանավորված, հանրաքվեի չեղարկմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախաձեռնեց համապատասխան միջոցառումներ հանրաքվեի նախապատրաստական փուլում իրականացված աշխատանքների կասեցման, դադարեցման ուղղությամբ:

2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվել են 2021 թվականի հունիսի 20-ին՝ Ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-171-Ն սահմանադրական օրենքով սահմանված՝ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման և անցկացման նոր կառուցակարգերի, արդյունքների ամփոփման և մանդատների բաշխման նոր կարգի ու պայմանների համաձայն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին և 104-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել էր թվով 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել թվով 8 միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով, ԱՊՀ դիտորդական առաքելություն, ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողով, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողով (ՀԱՊԿ ԽՎ), Ռուսաստանի Դաշնության Հանրային պալատ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն (ՖՄԿ), ընդհանուր թվով 483 միջազգային դիտորդներ, ինչպես նաև 19 տեղական հասարակական կազմակերպությունների՝ 8.749 դիտորդներ:

Այցելուի կարգավիճակով տեղամասային ընտրական հանձնաժողովներ են այցելել և հետևել քվեարկության, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների և այլ պետությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 70 ներկայացուցիչներ:



Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունները դիտարկելու և գնահատելու նպատակով ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) մայիսի 18-ին գործուղել էր Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): Ընտրությունների օրը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին միացան ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ) և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) պատվիրակությունները՝ կազմավորելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ):



Ընտրությունների լուսաբանումն ապահովել են տեղական 68 զանգվածային լրատվության միջոցի 745 և 50 օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցի 135 ներկայացուցիչ:



Միջազգային դիտորդական առաքելությունները գնահատել են ընտրական գործընթացի համապատասխանությունը ժողովրդավարական ընտրությունների չափորոշիչներին ու ներպետական օրենսդրությանը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն 20.06.2021թ.-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշել է, որ ընտրությունները «եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով՝ հաշվի առնելով վերջինիս կազմակերպման համար նախատեսված կարճ ժամանակահատվածը:», «Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմինն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ ու մասնագիտորեն և վայելել է ընտրական շահառուների վստահությունը: Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, հիմնարար իրավունքներն ու ազատություններն, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել:», ինչպես նաև «Ընտրությունների օրը, այդ թվում՝ նաև ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ, դրական են գնահատվել»:

Հարկ է նկատել, որ նման դիրքորոշում են արտահայտել միջազգային դիտորդական առաքելություն իրականացրած բոլոր կազմակերպությունները:

2.1. Ընտրությունների վարչարարությունը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ժամանակ ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ԺՀՄԻԳ Վերջնական զեկույցում արձանագրվել է. «ԿԸՀ-ն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և արդյունավետ կերպով՝ պահպանելով բոլոր իրավական վերջնաժամկետները՝ չնայած նախապատրաստական աշխատանքների համար ունեցած կարճ ժամանակին: ԿԸՀ նիստերը հեռարձակվել են առցանց և դրանց մասնակցել են կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք, դիտորդներ, լրատվամիջոցներ: Նիստերի օրակարգերը և ընդունված որոշումները սահմանված ժամկետներում հրապարակվել են ԿԸՀ կայքում:»:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը գնահատելով արհեստավարժ և համագործակցային, նիստերը բաց և կոնսենսուսային մոտեցմամբ, ԸԴԱ դիտորդներն արձանագրել են, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների «հանրային ցուցադրումը հետևողական չէ, ԸԸՀ որոշումները չեն հրապարակվում» և առաջարկվում է, որ. «ԿԸՀ-ն պետք է կանոնավոր կերպով և համապատասխան ժամկետների պահպանմամբ իր կայքում հրապարակի ԸԸՀ նիստերի օրացույցը, բոլոր ԸԸՀ որոշումները:»:

Հարկ է նկատել, որ ընտրական հանձնաժողովների կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակման համար Ընտրական օրենսգրքով սահմանված են հատուկ կարգեր: Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում պարտադիր հրապարակման են ենթակա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը և վարչական ակտերը ընդունումից հետո՝ մինչև հաջորդ օրվա ավարտը, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակահատվածում՝ նույն օրը, իսկ ընտրատարածքային

ընտրական հանձնաժողովների ընդունած վարչական ակտերը փակցվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում, ակտն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Նշված իրավանորմերի խախտումներ չեն արձանագրվել և ընտրական հանձնաժողովների ընդունած ակտերը հրապարակվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Այդուհանդերձ, այսօր արդեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների տեղակայման, նստավայրերի, կազմերի, նիստերի, վարչական վարույթների, ընդունած որոշումների և հայտարարությունների վերաբերյալ միասնական և առավել ամբողջական տեղեկատվությունը հասանելի է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների «Նիստեր» բաժնում զետեղված են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի օրակարգերը.



«Վարչական վարույթներ» բաժնում կարելի է տեսնել դիմումատուի վերաբերյալ տվյալները, նիստի վայրի, օրվա և ժամի մասին ծանուցումը և տվյալ դիմումով վարչական վարույթի արդյունքը՝ որոշումը:



Վարչական կարգով բողոքարկման դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից հնարավոր է իրազեկվել բողոքարկման վարույթի մասին, ծանոթանալ բողոքի բովանդակությանը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող ակտին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմանը, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալ նիստի արձանագրությանը:

2.2. Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 16.063 քաղաքացիներ, իսկ թվով 4.139 քաղաքացիներ մասնագետի կարգավիճակով իրականացրել են ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների աշխատանքի կազմակերպումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մարտի 26-ից մինչև ապրիլի 30-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ, իսկ մայիսի 16-ին և մայիսի 22-ին՝ ընտրությունների անցկացման մասնագիտական ստուգարք՝ ապահովելով լիակատար հնարավորություն իրավասու սուբյեկտների համար լիարժեք իրացնելու տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրենց իրավունքը:

Նշված դասընթացներին մասնակցելու համար կուսակցությունների կողմից ներկայացվել էր 15260 հայտ, իսկ առանձին քաղաքացիների կողմից՝ 5628 հայտ, ընդհանուր թվով՝ 20888 հայտ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 15580 քաղաքացիներ, որոնցից 12722-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:



Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո իրականացվեց նաև նշված հանձնաժողովների անդամների ուսուցումը, որն առանձնակի կարևորվում էր հատկապես նկատի ունենալով նոր քվեակարգի առանձնահատկությունները: Նշված ուսուցման կազմակերպման համար ժամանակահատվածը խիստ սահմանափակ էր, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովներն արտահերթ ընտրությունների դեպքում կազմավորվում են քվեարկության օրվանից 18 օր առաջ: Կազմակերպված ուսուցման ընդհանուր տևողությունը կազմեց 12 օր, իսկ ուսուցմանը մասնակցեցին տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 13.552 անդամներ, որոնցից 1859-ը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահներ, 1806-ը՝ հանձնաժողովի քարտուղարներ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ





Դասընթացի բոլոր մասնակիցներին տրամադրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի համար մշակված ուղեցույցներ:

Դասընթացները կազմակերպվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ՝ հաշվի առնելով Կովիդ-19 համավարակի պայմաններում ընդունված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները:

Այս համատեքստում, հարկ եմ համարում ներկայացնելու մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման գործընթացի կատարելագործմանն ու ներառականությանն ուղղված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներդրված «Առցանց ուսումնական հարթակը»:

Առցանց ուսումնական հարթակը գործարկված նոր ծրագրային գործիք է, որի նպատակն է ապահովել առցանց հասանելիություն ընտրական հանձնաժողովի անդամների, ընտրական գործընթացի այլ մասնակցիների և շահառուների համար ուսումնական նյութերին ու ձեռնարկներին:

Առցանց ուսուցման նշված հարթակում տեղադրված են ուսուցանվելու առանձին մոդուլներ, որոնք հնարավորություն են տալիս ընտրական հանձնաժողովի անդամներին, տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետներին, դիտորդներին, վստահված անձանց և այլ շահառուներին ծանոթանալու ընտրական օրենսդրությանը և ընտրական գործընթացի վերաբերյալ ուսումնական նյութերին, իրենց գործառույթներին, իրավունքներին և պարտականություններին: Նշված հարթակը բաց է բոլոր ցանկացողների համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում գործարկվեց նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման նոր համակարգը: Նշված առցանց համակարգի միջոցով տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտները առցանց ներկայացնում են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուներին: Համակարգը հայտատուին տրամադրում է պատրաստի տիրույթ ըստ տեղամասերի և այդ տեղամասում ունեցած պաշտոնների: Համակարգը սկզբունքորեն բացառում է տվյալների սխալ մուտքագրման հնարավորությունը, ինպես նաև կանխում կրկնանշանակումները:

2.3. Տեխնիկական սարքավորումների կիրառումն ընտրական գործընթացում

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ժամանակ թվով 1996 տեղամասերում գործարկվեցին 4.007 տեխնիկական սարքավորումներ: Տարածքային ընտրական հանձնաժողովներին տրամադրվել է նաև ընդհանուր առմամբ լրացուցիչ 300 տեխնիկական սարքավորում, անխափան սնուցման սարքավորումներ և երթուղիչներ՝ անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինումն ապահովելու համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՄԱԶԾ «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցության ծրագրի» աջակցությամբ իրականացրել է տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների և ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի թվով 132 քաղաքացիների ուսուցումը, իսկ Երևան քաղաքում և

հանրապետության մարզերում 12 օրվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել է տեխնիկական սարքավորումները սպասարկող շուրջ 4.300 մասնագետների ուսուցում և ստուգարք:

ՄԱԶԾ «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն» ծրագրի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներդրվել է նաև ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումների գույքագրման և օպերատորների գրանցման, տեխնիկական սարքավորումների և դրանք սպասարկող մասնագետների կառավարման ավտոմատացված նոր համակարգ (այսուհետ՝ Ինֆորմացիոն համակարգ): Ինֆորմացիոն համակարգի ծրագրային ապահովման նախագծման աշխատանքներն սկսվել են 2019 թվականին: Նոր համակարգը, ի թիվս այլ գործիքների, հնարավորություն է տալիս իրականացնել տեխնիկական սարքավորումների հաշվառում, գույքագրում և անհրաժեշտ հաշվետվությունների կազմում:



2021 թվականի խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ առաջին անգամ գործարկվեց Ինֆորմացիոն համակարգը, որի կիրառման արդյունքում ավտոմատացված ձևաչափով իրականացվել է տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների գրանցման, պայմանագրերի կնքման գործընթացը, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների՝ ըստ ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների բաշխման գործընթացը:

Իրականացվել է տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման կենտրոնական բաղադրիչի թարմացումը, որը հնարավորություն է ընձեռնում բարձրացնել գործընթացի կառավարելիությունը:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով

սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրության նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, ամփոփել է տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները և հրապարակել հանձնաժողովի համացանցային կայքում:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ: Պատրաստվել և հրապարակվել է տեղեկատվական բնույթի պաստառներ, հանրային իրազեկման տեսահոլովակներ:

2.4. Հանրային իրազեկում և հրապարակայնություն

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 11 ուղեցույց և ուսումնական ձեռնարկ (հուշաթերթ)՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, էլեկտրոնային քվեարկության իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ, ուղեցույց վատ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ, տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների համար: Հրատարակվել է հանրային իրազեկման 9 հոլովակ, տեղեկատվական բնույթի 7 պաստառ, այդ թվում՝ քվեարկության կարգի պարզաբանման վերաբերյալ պաստառ ժամկետային զինծայառողների համար, որն առաքվել է զորամասեր:

Հայաստանում ընտրական գործընթացների աջակցության ծրագրի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրեց ընտրողների իրազեկման արշավ՝ պատրաստելով չորս ուսուցողական հոլովակ՝

քվեարկության կարգի, ընտրական տեղամասերում ԿՈՎԻԴ-19-ից պաշտպանության կանոնների պահպանման, կանանց մասնակցության խթանման մասին: Հոլովակները ցուցադրվել են ազգային հեռուստաընկերություններով և սոցիալական մեդիայում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար: Մասնավորապես, քվեարկության կարգի վերաբերյալ հոլովակներն ապահովվել են սուրդո թարգմանությամբ և առաջին անգամ կիրառվել է նաև հոլովակի բանավոր խոսքի զուգակցումը տեքստային եղանակով, նախապատրաստվել է քվեարկության կարգի, ինչպես նաև քվեարկության կարգը պարզաբանող հանրային իրազեկման թերթիկների տպագրությունը՝ խոշորացված տառատեսակով և բրայլյան գրով, բոլոր տեղամասային կենտրոններին տրամադրվել են բրայլյան հատուկ կաղապարներ, որոնք ապահովում են ինքնուրույն քվեարկության իրականացումը: Տեղամասերի վրա փակցվել է մատչելիության վերաբերյալ տեղեկություններ:

Քվեարկության կարգի վերաբերյալ երկու տեղեկատվական ուղեցույց-թերթիկները մշակվել և տպագրվել են նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ձևաչափով, որոնք տրամադրվել են ընտրողներին հանրային սննդի, առևտրի օբյեկտների միջոցով, հանրային տրանսպորտում, կամավորականների, տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, տեղամասային ընտրական հանձնաժողովների դասընթացների մասնակիցների ջանքերով:

2021 թվականի խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ առաջին անգամ այս ուղեցույցները, ընտրություններին մասնակցող կուսակցություններին և դաշինքների ցանկը տպագրվեցին նաև ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների լեզուներով և համապատասխան համայնքների ներկայացուցիչների միջոցով փոխանցվեցին շահառուներին:

Նման համընդգրկուն արշավն ապահովեց ընտրական գործընթացքում ներգրավված բոլոր խմբերի ներկայացուցիչներին, այդ թվում՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին առավել մատչելի և ընդգրկուն ծանոթանալ քվեարկության կարգին և հնարավորինս արդյունավետ իրացնել իրենց ընտրական իրավունքը:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ

դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկատվության հասանելիությունը առանձնակի ուշադրություն է դարձվել Կենտրոնական ընտրական հանձաժողովի կայքի աշխատանքներին:

Համապետական ընտրություններին գործարկվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի ամբողջությամբ նորացված տարբերակը: Ի դեպ, ամբողջ ընտրական գործընթացի ժամանակ զուգահեռաբար գործարկվել են կայքի և հին և նորացված տարբերակները, ու թարմացված տեղեկատվությունը հասանելիություն է ապահովել կայքի երկու տարբերակներում:

Ընտրական օրենսգրքի փոփոխություններին համապատասխան, շատ կարճ ժամկետներում մշակվել և ներդրվել են քվեարկության օրը տարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային եղանակով ստացված տվյալների առցանց հրապարակման հնարավորություններ՝ գրաֆիկական և ըստ տեղամասերի աղյուսակավորման տեսքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնում և համացանցային կայքում, ինչպես նաև այդ տվյալները հեռուստաընկերություններին անմիջականորեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցանցից փոխանցման ծրագրա-տեխնիկական միջոցներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից հնարավոր էր հետևել տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների առցանց հեռարձակմանը՝ 1517 տեղամասերից: 1350 տեղամասերից հեռարձակման ընթացքում որևէ խափանում առկա չի եղել: Ընդհանուր հեռարձակման տևողությունը կազմել է 70.941 ժամ: Մոտ 167 տեղամասերից եղել են հեռարձակման մասնակի խափանումներ, որոնք ընդհանուր առմամբ կազմել են 357 ժամ: Ընդհանուր հասանելիությունը 47 ժամվա կտրվածով կազմել է 99.5%: Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների և դաշինքների համար ապահովվել է ավելի լայն հնարավորություն տեսահսկում իրականացնելու համար:

2.5. Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առաջադրվել էին աննախադեպ թվով կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ, 22 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք: Ընտրություններին առաջադրված 22 կուսակցությունները և կուսակցությունների 4 դաշինքները գրանցվել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առաջադրված՝ «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությունը քվեարկության օրվանից 10 օր առաջ՝ 10.06.2021թ. ներկայացրեց ինքնաբացարկի

մասին դիմում, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից բավարարվեց (10.06.2021թ. ԿԸՀ 132-Ա որոշում):

Ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Համապետական ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ»: Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող 22 կուսակցություններից և կուսակցությունների 4 դաշինքներից չորս կուսակցության՝ «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինքի՝ Հայաստան դաշինք, ընտրական ցուցակներն ունեցել են երկրորդ մասեր, որոնցում ընդգրկված են եղել 14 թեկնածուներ:

2.6. Քվեարկություն

2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը քրեակատարողական հիմնարկներում: Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին 1996 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված թվով 16.064 քաղաքացիներից և որպես մասնագետ ներգրավված 4.139 (132-ը ԸԸՀ-ներում որպես աջակցման կենտրոնի մասնագետներ) քաղաքացիներից քվերակության օրը բացակայել են տեղամասային ընտրական հանձնաժողովի 115 անդամներ:

Ընդհանուր թվով 4007 տեխնիկական սարքավորումներից ընդամենը 3-ը տեխնիկական պատճառներով պայմանավորված չեն տպել նշված տեղեկանքը: Հարկ է արձանագրել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով իրականացված տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման փոփոխությամբ (քվեարկության նախորդ օրը տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետներն իրականացնում են տպիչի ստուգում) պայմանավորված 2021 թվականի ընտրությունների ժամանակ բոլոր 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի, մարզկենտրոնների, 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների և Երևան քաղաքի հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի

վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկության օրը հանրապետության 2008 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների թվով 23.031 վստահված անձ, թվով 1779 ընտրական տեղամասեր են այցելել ընդհանուր թվով 8.411 տեղական և միջազգային դիտորդներ և թվով 1819 ԶԼՄ ներկայացուցիչներ:

2.7. Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր 2008 ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 12 ժամվա ընթացքում, ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի՝ իր պաշտոնական կայքում հրապարակելով ընտրությունների նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր էր հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը՝ ստանալով յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները: Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ:

Ընտրական տեղամասերի շուրջ 98%-ում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները ներկա են գտնվել քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացին: 2008 ընտրական տեղամասերից 1517-ում քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացին հնարավոր էր հետևել առցանց՝ տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների միջոցով:

2.8. Քվեարկության արդյունքերի վերահաշվարկ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների

ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:»:

Թվով 3 տարածքային ընտրական հանձնաժողովներում (թիվ 2, 3, 9) ներկայացվել է ընդհանուր թվով 4 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ՝ 4 դիմում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են նաև դիմումներ, որոնք վերաբերվել են տարբեր տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ անճշտություններին: Ներկայացված դիմումները վերաբերվել են ընդհանուր թվով 24 տեղամասերի տվյալներին: Ընտրական օրենսգրքի պահանջների հաշվառմամբ տարածքային ընտրական հանձնաժողովները իրականացրել են վերահաշվարկ ինչպես վստահված անձանց ներկայացրած դիմումներով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ: Ընդհանուր առմամբ վերահաշվարկվել են 82 ընտրական տեղամասերի արդյունքներ: Արդյունքում՝ թվով 16 տեղամասերում նախապես արձանագրված քվեարկության արդյունքները որևէ փոփոխություն չեն կրել, թվով 31 տեղամասերում թեկնածուներին տրված կողմ ձայների որևէ փոփոխություն չի արձանագրվել: Մնացած 51 տեղամասերում արձանագրվել են ոչ էական բնույթի փոփոխություններ՝ պայմանավորված վավեր կամ անվավեր քվեաթերթիկների ճանաչման հետ:

2.9. Դիմում բողոքների քննարկում

Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»:

2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը՝ 20.06.2021թ., տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է մեկ դիմում՝ նախընտրական քարոզչության կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ:

Մինչև քվեարկության օրը՝ 20.06.2021թ., Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են թվով 85 դիմումներ (բողոքներ):

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է թվով 21 դիմում, իսկ քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է թվով 18 դիմում: Ներկայացված բոլոր դիմումները Ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ: Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում: Բոլոր այն դեպքերում, երբ դիմումատուները ներկայացել են իրենց դիմումների քննարկմանը, ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել են չորս տասնյակից ավելի կայքերում տեղ գտած ավելի քան 400 հաղորդումներին: Մեկնաբանությունների ու պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը հենց քվեարկության օրը զետեղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

2.10. Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը

2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել 27 հայցադիմում:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն. «Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել էր չորս դիմում Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին, որոնցից մեկը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ: Ներկայացված բոլոր դիմումները Ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի նիստում:

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության արդյունքներով ընդունված թիվ 184-Ա որոշումը վիճարկվել է ՀՀ սահմանադրական դատարան ընտրություններին մասնակցող՝ Հայաստան դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից:

Դիմումների քննության արդյունքում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշումը թողնվել է ուժի մեջ:

3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2020-2021ԹԹ.

3.1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 2020 թվական

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2019թ. հուլիսի 9-ի թիվ 35-Ա որոշմամբ 2020 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էր սահմանել 2020 թվականի մարտի 15-ը, 2020 թվականի հունիսի 14-ը, 2020 թվականի հոկտեմբերի 18-ը:

2020 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել թվով 6 համայնքներում:

2020 թվականի հունվարի 19-ին Արագածոտնի մարզի Թլիկ համայնքում անցկացվել է համայնքի ղեկավարի նոր ընտրություն (2019թ. դեկտեմբերի 8-ին նշանակված հերթական ընտրությունը Ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն ճանաչվել էր չկայացած) և 2020 թվականի մարտի 15-ին՝ թվով 5 համայնքներում՝ Լոռու մարզի Չկալով համայնքում, Շիրակի մարզի Տուֆաշեն, Նահապետավան, Գեղանիստ համայնքներում և Արագածոտնի մարզի Ագարակ հայանքում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի ընտրություններ:

Ընտրությունները կազմակերպելու նպատակով կազմավորվել են ընդհանուր թվով 6 ընտրական տեղամաս, որոնցում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 3.506, իսկ քվեարկությանը մասնակցել են 2.295-ը:

2020 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մեծամասնական ընտրակարգով առաջադրվել են համայնքի ղեկավարի 15 թեկնածու: Որևէ թեկնածուի գրանցում չի մերժվել տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից: Ինքնաբացարկ են ներկայացրել 3 թեկնածուներ և քվեարկություններին մասնակցել են 12 թեկնածուներ:

Պայմանավորված Հայաստանի Հանրապետություն կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն, այնուհետ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումներով 2020 թվականի հունիսի 14-ին և հոկտեմբերի 18-ին ընտրություններ չեն նշանակվել և չեն անցկացվել:

2020Թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղեկատվություն ընտրությունների վերաբերյալ

Մարզ	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Համայնքի ղեկավար				Ավագանու անդամի			
		Ընդամենը	որից՝			Ընդամենը	որից՝		
			որից՝ արտա-հերթ	քաղաք. համայնք	10000 և ավելի		որից՝ արտա-հերթ	քաղաք. համայնք	10000 և ավելի
Արագածոտն	2	2	2	0	0	0	0	0	0
Լոռի	1	1	0	0	0	0	0	0	0
Շիրակ	3	3	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	**6**	**6**	**2**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**

որից՝

Հերթական ընտրությունների օրերը	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Համայնքի ղեկավար			Ավագանու անդամի		
		ընդ.	որից՝ արտահերթ	քաղաք. համայնք	ընդ.	որից՝ արտահերթ	քաղաք. համայնք
19.01.2020	1[2]	1	1	0	0	0	0
15.03.2020	5	5	1	0	0	0	0
Ընդամենը	6	6	2	0	0	0	0

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020Թ,)

Մարզ	Առաջադրված թեկնածուներ	Ինքնաբացարկ	Մերժված	Քվեարկված թեկնածուներ	Ընտրված
Արագածոտն	7	0	0	7	2
Լոռի	2	1	0	1	1
Շիրակ	6	2	0	4	3
Ընդամենը	**15**	**3**	**0**	**12**	**6**



[2] *Անցկացվել է նոր ընտրություն հերթական ընտրությունը չկայացած ճանաչվելու պատճառով*

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

ԸՍՏ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Մարզ	Քվեաթերթիկում ընդգրված թեկնածուների քանակը		
	1 թեկնածու	2 թեկնածու	5 թեկնածու
Արագածոտն	0	1	1
Լոռի	1	0	0
Շիրակ	2	1	0
Ընդամենը	**3**	**2**	**1**





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզ	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Տեղամասերի թիվը	Ընտրողների թիվը	Քվեարկության մասնակիցների թիվ	%
Արագածոտն	2	2	1536	1077	70.12
Լոռի	1	1	132	84	63.64
Շիրակ	3	3	1838	1134	61.70
Ընդամենը	**6**	**6**	**3506**	**2295**	**65.46**





ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԸՆՏՐՎԱԾ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

Մարզ	Համայնքների թիվ	Քվեարկված թեկնածուներ	Վերընտրվել են	Չեն վերընտրվել	Չեն առաջադրվել (համայնքի գործող ղեկավարները)
Արագածոտն	2	7	1	-	1 *Ագարակ*
Լոռի	1	1	1	-	-
Շիրակ	3	4	2	1	-
Ընդամենը	**6**	**12**	**4**	**1**	**1**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ

Կուսակցության անվանումը	առաջադր-ված	ինքնա-բացարկ	քվ. մասնակցած թեկնածուներ	որից՝ ինքնաառա-ջադրմամբ	ընտրված	որից՝ ինքնաառա ջադրմամբ
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ	14	3	11	11	6	6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	1	0	0
Ընդամենը	**15**	**3**	**12**	**12**	**6**	**6**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ

	առաջադր-ված	ինքնաբա-ցարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ անկուսակ-ցական	ընտրված	որից՝ անկուսակ-ցական
Ինքնաառաջադրում	15	3	12	11	6	6
Ընդամենը	**15**	**3**	**12**	**11**	**6**	**6**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՍԵՌԻ

Մարզ	առաջադրված		ինքնաբացարկ		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	7	0	0	0	7	0	2	0
Լոռի	2	0	1	0	1	0	1	0
Շիրակ	6	0	2	0	4	0	3	0
Ընդամենը	**15**	**0**	**3**	**0**	**12**	**0**	**6**	**0**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՏԱՐԻՔԻ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	2	0	5	2	0	0
Լոռի	1	1	0	0	0	0
Շիրակ	1	1	3	2	0	0
Ընդամենը	4	2	8	4	0	0



3.2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 2021 թվական

2021 թվականի մայիսի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը, որը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասով ուժի մեջ մտավ 2021 թվականի հունիսի 26-ին, իսկ առավել ծավալային մասով փոփոխություններն ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ից: Մի շարք իրավահարաբերություններ ենթարկվել են նոր կանոնակարգումների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրականացրել է համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, մշակվել և փորձարկվել են նոր ծրագրային լուծումներ և նոր գործիքներ, ինչպես նաև ձևափոխել և փորձարկել են գործող ծրագրային լուծումները:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասով Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները կրում էին հայեցակարգային բնույթ և դրանց կատարումն ապահովելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակվել և գործարկվել են տեղեկատվական և հաղորդակցական նոր գործիքներ ընտրական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնելու և ամրապնդելու նպատակով, գործող ծրագրերը փոփոխվել և նորացվել են օրենսդրական նոր կանոնակարգումներին համապատասխան: Էական աշխատանքներ են տարվել կիբերանվտանգության կատարելագործման ուղղությամբ:

2021 թվականին Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության գործընթաց ներմուծվեց համամասնական ընտրակարգը: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 104.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվելու էին համամասնական ընտրակարգով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2020 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 28-Ա որոշմամբ[3] 2020 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էր սահմանել 2021 թվականի մարտի 14-ը, 2021 թվականի հոկտեմբերի 17-ը, 2021 թվականի նոյեմբերի 14-ը և 2021 թվականի դեկտեմբերի 5-ը:

---

[3] *Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 23.09.2020թ. «2021 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 28-Ա որոշման մեջ կատարվել է փոփոխություն և լրացում, համապատասխանաբար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 22.07.2021թ. N 195-Ա և 26.08.2021թ. N 205-Ա որոշումներով*

2021 թվականին՝ թվով 52 համայնքներում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի նոր կանոնակարգումների համաձայն:

Նշված համայնքներից 45-ում տեղի են ունեցել միայն ավագանու ընտրություններ՝ համամասնական ընտրակարգով, որոնցից 44-ը (բացառությամբ՝ Գյումրիի) եղել են խոշորացված համայնքներ: Եվ ընդամենը 7 համայնքներում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների մեծամասնական ընտրակարգով ընտրություններ:

Ընտրությունները կազմակերպելու նպատակով կազմավորվել են ընդհանուր թվով 1235 ընտրական տեղամասեր, որոնցում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 1.359.947, իսկ քվեարկությանը մասնակցել են 566.357-ը:

Մեծամասնական ընտրակարգով՝ 2021թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առաջադրվել են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի 76 թեկնածուներ: Որևէ թեկնածուի գրանցում չի մերժվել տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից: Ինքնաբացարկ են ներկայացրել 3 թեկնածուներ և քվեարկություններին մասնակցել են 71 թեկնածուներ:

Համամասնական ընտրակարգով անցկացվող թվով 45 համանքների ավագանիների ընտրություններին, որպես թեկնածու առաջադրվել և գրանցվել են ընդհանուր թվով 167 կուսակցություն և կուսակցությունների դաշինք: Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներով առաջադրվել են ավագանու անդամի 5.350 թեկնածուներ:

5.350 թեկնածուներից տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից մերժվել է 4 թեկնածուի գրանցում և 3 թեկնածուի գրանցում ճանաչվել է անվավեր: Ինքնաբացարկի դիմում են ներկայացրել 753 թեկնածուներ, իսկ մինչև գրանցումը թեկնածությունը հանել են 43-ը:

Թվով 45 համայնքներից միայն Արմավիր համայնքում է առաջադրվել և քվեարկվել մեկ կուսակցություն, իսկ առավելագույնը 10 քաղաքական ուժեր առաջադրվել և գրանցվել են Գյումրի և Վանաձոր համայնքներում:

Տեղամասում քվեարկության արդյունքների վերհաշվարկ է կատարվել 76 տեղամասերում, որի արդյունքում 24 տեղամասերում որևէ արդյունք չի փոփոխվել, իսկ թվով 52 տեղամասերում արձանագրվել են եզակի թվով փոփոխություններ:

Թվով 1235 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 150-ում առկա են եղել թվով 242 գրառումներ, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ, ըստ որոնց արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատա-կանները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ չեն ներկայացվել:

2021 թվականին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկությունից հետո դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից ներկայացվել է 4 դիմում-բողոք թվով 4 տարածքային ընտրական հանձնաժողովներին (թիվ 18, 21, 27, 29):

Թվով 3 համայնքերի (Տաթև, Վարդենիս, Վանաձոր) ընտրությունների արդյունքները բողոքարկվել են Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, որի արդյունքում որևէ համայնքում ընտրության արդյունքներն անվավեր չեն ճանաչվել:

2020-2021 թվականների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել թվով 25 հավատարմագրման դիմումներ և հավատարմագրվել են ընդհանուր թվով 4710 դիտորդներ:

ՏԻՄ ընտրության ամսաթիվ	Դիտորդական առաքելու-թյունների ընդհանուր թիվը	Միջազգային կազմակերպու-թյուններ	Տեղական կազմակերպու-թյուններ	Դիտորդների ընդհանուր թիվը
2020թ. մարտի 15	**0**	**0**	**0**	**0**
2021թ.հոկտեմբերի 17	**8**	**0**	**8**	**946**
2021թ.նոյեմբերի 14	**8**	**0**	**8**	**642**
2021թ.դեկտեմբերի 5	**9**	**1**[4]	**8**	**3122**

2020-2021 թվականներին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների լուսաբանումն ապահովել են 61 զանգվածային լրատվության միջոցի 603 ներկայացուցիչ:

ՏԻՄ ընտրության ամսաթիվ	ԶԼՄ-ների թիվը	ԶԼՄ ներկայացուցիչների թիվը
2020թ. մարտի 15	**1**	**1**
2021թ.հոկտեմբերի 17	**15**	**157**
2021թ.նոյեմբերի 14	**20**	**177**
2021թ.դեկտեմբերի 5	**25**	**268**

[4] ***«Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես»-ի դիտորդները 05.12.2022թ. ՏԻՄ ընտրությունները դիտարկել են առցանց:***

2020 և 2021 թվականներին կայացած ընտրությունների ժամանակ չեն գրանցվել ընտրական հանձնաժողովների կողմից, հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ, հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին կամ վստահված անձին հեռացնելու, կամ քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվ սահմանելու դեպքեր:

3.3. Ընտրական վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ

Ինչպես արդեն նշել ենք 2021 թվականի մայիսի 7-ին «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասով Ընտրական օրենսգրքում կատարվել էին ծավալուն և հայեցակարգային փոփոխություններ ու լրացումներ: Դրանք իրացնելու համար նախապատարաստվել, մշակվել և ներդրվել են նոր ծրագրային լուծումները:

Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում է նաև տեղեկություններ տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի օրակարգերի, որոշումների, հայտարարությունների մասին: Կայքում վերբեռնվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացված դիմում բողոքները, հրապարակվում է ծանուցում վարչական վարույթի օրվա, ժամի և վայրի վերաբերյալ: Վարչական վարույթի արդյունքում ընդունված որոշումները ևս զետեղվում են կայքում:

Նոր ծրագրային լուծումները հնարավորություն են տալիս Տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտներին առցանց ներկայացնելու տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուներին: Ներդրվել է կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգը, որի միջոցով համակարգով օգտվողի հաշիվ ունեցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը մուտքագրում է իր ընտրական ցուցակներում ընդգրկված անձանց տվյալները: Համակարգը անձանց տվյալները ստանում է բնակչության պետական ռեգիստրից, ստուգում է ցուցակի համապատասխանությունն Ընտրական օրենսգրքի պահանջներին, ձևավորում է ցուցակի էլեկտրոնային տարբերակը ներբեռնման հնարավորությամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում արդեն իսկ գործում է էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու հարթակը, ՀԼՄ ներկայացուցիչների և դիտորդների առցանց հավատարմագրման համակարգը, որի միջոցով

դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները և զանգվածային լրատվության միջոցները ներկայացնում են իրենց հավատարմագրման դիմումները, իսկ հավատարմագրվելուց հետո ստանալով օգտվողի հաշիվ՝ ձևավորում են իրենց դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների ցուցակը, ինքնաշխատ եղանակով համակարգը ձևավորում է համապատասխան վկայականները, որոնք տպագրվում են հենց հավատարմագրողների կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում զետեղված է տեղեկատվություն տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար ընտրական տեղամասերի մատչելիության պայմանների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը զուգակցված է որոնման հնարավորությամբ: Այս գործիքը հնարավորություն է ընձեռում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց տեղեկանալ այն տեղամասային կենտրոնների գտնվելու վայրերի մասին, որոնք ունեն բավարար պայմաններ, որպեսզի ցանկության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները լիարժեք իրացնեն տեղմասային կենտրոնի ընտրության իրենց իրավունքը:

3.4. Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նոր կանոնակարգումներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացրել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցում:

Վերապատրաստման գործնական դասընթացներ են կազմակերպվել հանրապետության մարզերում գործող թվով 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (բացառությամբ՝ Երևան քաղաքի թվով 10 ԸԸՀ-ների) անդամների համար, որին նախորդել էր ուսուցանողների ուսուցման գործընթացը:

Հաշվի առնելով Ընտրական օրենսգրքում կատարված վերջին փոփոխություններն ու լրացումները նշված վերապատրաստման դասընթացների շրջանակներում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներին և քաղաքացիական ծառայողներին ուսուցանվել են համամասնական ընտրակարգով անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ընտրական իրավահարաբերությունների և հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթների առանձնահատկությունները: Դասընթացները ներառել են նաև արդյունավետ կառավարման, ինչպես նաև COVID-19-ի պայմաններում ընտրությունները պատշաճ կազմակերպելու հետ կապված ուսուցողական նյութեր: Ուսուցման ծրագիրը ներառել է տեսական և գործնական բաղադրիչներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար 2021 թվականին, կրկին անգամ՝ սեպտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 31-ը, կազմակերպվել և անցկացվել են ընտրությունների անցկացման մասնագիտական

դասընթացներ և ստուգարքներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար ներկայացվել էր 27.105 հայտ, որոնցից 19.112-ը ներկայացվել էր կուսակցությունների կողմից, իսկ 7.993՝ քաղաքացիների: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 19.706 քաղաքացիներ, որոնցից 16.235-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

	2021 (սեպտեմբեր-հոկտեմբեր)				
Հայտատու	Ընդամենը	մասնակցած	%	ստացած	%
Քաղաքացիներ	7993	6629	82.94	5622	84.81
ԲՀԿ	3218	2117	65.79	1613	76.19
ԼՀԿ	3152	2082	66.05	1746	83.86
Համախմբում կուսակցություն	458	290	63.32	236	81.38
Հայաստան Դաշինք	648	367	56.64	311	84.74
Հայաստանի Ժողովրդական կուսակցություն	215	27	12.56	20	74.07
Հայոց Հայրենիք կուսակցություն	137	95	69.34	64	67.37
Հայրենիք կուսակցություն	852	550	64.55	456	82.91
ՀՀԿ	3576	2676	74.83	2150	80.34
ՀՅԴ	1456	877	60.23	719	81.98
Վերածնվող Հայաստան կուսակցություն	52	38	73.08	30	78.95
ՔՊԿ	5348	3958	74.01	3268	82.57
Ընդամենը	**27105**	**19706**	**72.70**	**16235**	**82.39**





3.5. Տեխնիկական սարքավորումների կիրառումը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ

2020-2021 թվականների ընթացքում կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ շարունակվել են կիրառվել տեխնիկական սարքավորումները, որոնց միջոցով իրականացվել է ընտրողների գրանցումը:

2020 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմավորված 5 ընտրական տեղամասերում կիրառվել են 7 տեխնիկական սարքավորումներ, 3 ընտրական տեղամասերում ընտրողների գրանցումն իրականացվել է մեկ սարքավորմամբ և 2-ում՝ երկու տեխնիկական սարքավորումներով:

2021 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների գրանցումն իրականացվել է ընդհանուր թվով 2.527 տեխնիկական սարքավորումների կիրառմամբ:

Տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքներն յուրաքանչյուր ընտրության համար իրականացվել են առանձին: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների կիրառումն ու սպասարկումն իրականացվել է բացառապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տեղական մասնագետների կողմից:

Հարկ է նկատել, որ 2021թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին իրականացվել են նաև տեխնիկական սարքավորումների զննման, հաշվառման, գույքագրման և լիցքավորման պլանային աշխատանքներ: Միաժամանակ, իրականացվել են 2021թ. նոյեմբերի 14-ին և դեկտեմբերի 5-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ գործարկվող ավելի քան 2500 տեխնիկական սարքավորումների ծրագրային ներբեռնման աշխատանքներ: Ստուգվել են շուրջ 900 անխափան սնուցման սարքավորումներ և 900 երթուղիչներ: Տարածքային ընտրական հանձնաժողովներին տրամադրվել են նաև ընդհանուր առմամբ լրացուցիչ 300 տեխնիկական սարքավորումներ, անխափան սնուցման սարքավորումներ և երթուղիչներ՝ անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինումն ապահովելու համար:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 8 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա:

Ընդհանուր թվով 1235 ընտրական տեղամասերից՝ 357 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել է մեկ տեխնիկական սարքավորում, իսկ թվով 878 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 470-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, 408-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով բացառելով՝ նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

2021 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընդհանուր առմամբ գործածված թվով 2527 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել մոտ 2,5 տոկոսի հետ կապված: Բոլոր խնդիրներն անմիջապես լուծում են ստացել և արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 1235 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով, բոլոր տեղամասերում մինչ քվեարկության մեկնարկը տպվել են գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները, իսկ քվեարկության ավարտից հետո՝ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ:



2021Թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղեկատվություն ընտրությունների վերաբերյալ

Մարզ	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Համայնքի ղեկավար		Ավագանու անդամի		Համամասնական ընտրակարգով	
		Ընդամենը	որից՝ որից՝ արտա-հերթ	Ընդամենը	որից՝ որից՝ արտա-հերթ	Ընդամենը	որից՝ որից՝ արտա-հերթ
Արագածոտն	6	3	0	3	0	3	0
Արարատ	4	0	0	0	0	4	0
Արմավիր	8	0	0	1	0	7	0
Գեղարքունիք	4	0	0	0	0	4	0
Լոռի	7	2	0	2	0	5	0
Կոտայք	7	0	0	1	0	6	0
Շիրակ	5	0	0	0	0	5	0
Սյունիք	5	0	0	0	0	5	0
Վայոց ձոր	3	0	0	0	0	3	0
Տավուշ	3	0	0	0	0	3	0
Ընդամենը	**52**	**5**	**0**	**7**	**0**	**45**	**0**

որից՝

Հերթական ընտրությունների օրերը	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Համայնքի ղեկավար			Ավագանու անդամի		
		ընդ.	որից՝ արտա-հերթ	քաղաք. համայնք	ընդ.	որից՝ արտա-հերթ	քաղաք. համայնք
17.10.2021	9	2	0	0	3	0	0
14.11.2021	5	1	0	0	2	0	0
05.12.2021	38	2	0	0	2	0	0
Ընդամենը	52	5	0	0	7	0	0



Տեղեկատվություն 2021թ. կազմավորված տեղամասերի, ընտրողների թվի և քվեարկության մասնակիցների վերաբերյալ

Մարզ	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Տեղամասերի թիվը	Ընտրողների թիվը	Քվեարկության մասնակիցների թիվ	%
Արագածոտն	6	114	92187	41974	45.53
Արարատ	4	153	205602	95810	46.60
Արմավիր	8	167	213811	70421	32.94
Գեղարքունիք	4	134	160646	69553	43.30
Լոռի	7	135	151857	59063	38.89
Կոտայք	7	128	171168	73428	42.90
Շիրակ	5	199	190510	65468	34.36
Սյունիք	5	101	68975	40556	58.80
Վայոց ձոր	3	32	29594	16303	55.09
Տավուշ	3	72	75597	33781	44.69
Ընդամենը	**52**	**1235**	**1359947**	**566357**	**41.65**





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզ	Առաջադրված թեկնածուներ	Ինքնաբացարկ	Մերժված	Քվեարկված թեկնածուներ	Ընտրված
Արագածոտն	29	1	0	28	18
Արմավիր	6	0	0	6	5
Լոռի	24	1	0	23	12
Կոտայք	17	1	0	14	9
Ընդամենը	**76**	**3**	**0**	**71**	**44**

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ





ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	Առաջադրված	Ինքնաբացարկ	Մերժված	Քվեարկված թեկնածուներ	Ընտրված
Արագածոտն	7	1	0	6	3
Լոռի	5	0	0	5	2
Ընդամենը	12	1	0	11	5



ԸՍՏ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Մարզ	քվեաթերթիկում ընդգրված թեկնածուների քանակը		
	1 թեկնածու	2 թեկնածու	3 թեկնածու
Արագածոտն	1	1	1
Լոռի	0	1	1
Ընդամենը	1	2	2





ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԸՆՏՐՎԱԾ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

Մարզ	Ընդամենը համայնք	Քվեարկված թեկնածուներ	Վերընտրվել են	Չեն վերընտրվել	Չեն առաջադրվել (համայնքի գործող ղեկավարները)	
Արագածոտն	3	6	1	0	2	*Արևուտ, Մեծաձոր*
Լոռի[5]	2	5	1	0	1	*Ֆիոլետովո*
Ընդամենը	**5**	**11**	**2**	**0**	**3**	



ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	Առաջադրված	Ինքնաբացարկ	մերժված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արագածոտն	22	0	0	22	15
Արմավիր	6	0	0	6	5
Լոռի	19	1	0	18	10
Կոտայք	17	1	0	14	9
Ընդամենը	**64**	**2**	**0**	**60**	**39**



[5] ***Լերմոնտովո համայնքում առաջադրվել են Անտառաշեն և Լերմոնտովո համայնքների ղեկավարները, ընտրվել է Լերմոնտովո համայնքի ղեկավարը***

ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Կուսակցության անվանումը	Առաջադրված	Ինքնաբացարկ	Քվեարկված թեկնածուներ	որից՝ ինքնաառաջադրումով	Ընտրված	որից՝ ինքնաառաջադրումով
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ	11	1	10	10	5	5
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	1	0	0
Ընդամենը	**12**	**1**	**11**	**11**	**5**	**5**



Ավագանու անդամի թեկնածուներ

Կուսակցության անվանումը	Առաջադրված	Ինքնաբացարկ	Քվեարկված թեկնածուներ	որից՝ ինքնաառաջադրումով	Ընտրված	որից՝ ինքնաառաջադրումով
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ	54	2	51	51	33	33
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	1	1	1
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	9	0	8	0	5	0
Ընդամենը	**64**	**2**	**60**	**52**	**39**	**34**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

	առաջադր-ված	ինքնաբա-ցարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ անկուսակ-ցական	ընտրված	որից՝ անկուսակ-ցական
Ինքնաառաջադրում	12	1	11	10	5	5
Ընդամենը	**12**	**1**	**11**	**10**	**5**	**5**

Ավագանու անդամի թեկնածուներ

	առաջադր-ված	ինքնաբա-ցարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ անկուսակ-ցական	ընտրված	որից՝ անկուսակ-ցական
Ինքնաառաջադրում	55	2	52	51	34	33
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	9	0	8	0	5	0
Ընդամենը	**64**	**2**	**60**	**51**	**39**	**33**







ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՍԵՌԻ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Մարզ	առաջադրված		ինքնաբացարկ		քվ. մասն.		ընտրված	
	Արական	իգական	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	7	0	1	0	6	0	3	0
Լոռի	5	0	0	0	5	0	2	0
Ընդամենը	**12**	**0**	**1**	**0**	**11**	**0**	**5**	**0**



Ավագանու անդամի թեկնածուներ

Մարզ	Առաջադրված		Ինքնաբացարկ		Քվ. մասն.		ընտրված	
	Արական	իգական	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	18	4	0	0	18	4	13	2
Արմավիր	6	0	0	0	6	0	5	0
Լոռի	14	5	1	0	13	5	9	1
Կոտայք	14	3	1	0	11	3	7	2
Ընդամենը	**52**	**12**	**2**	**0**	**48**	**12**	**34**	**5**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՏԱՐԻՔԻ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	1	0	2	2	3	1
Լոռի	2	0	1	1	2	1
Ընդամենը	3	0	3	3	5	2



Ավագանու անդամի թեկնածուներ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	9	6	10	6	3	3
Արմավիր	4	3	2	2	0	0
Լոռի	10	6	5	2	3	2
Կոտայք	2	2	4	3	8	4
Ընդամենը	25	17	21	13	14	9



ՀԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղեկատվություն համամասնական ընտրակարգով ավագանիների ընտրություններին գրանցված կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վերաբերյալ՝ ըստ մարզերի

Մարզ	համայնքների քանակը	թեկնածուների քանակ	ընտրական ցուցակներում առաջադրման ժամանակ ընդգրկված թեկնածուների քանակ
Արագածոտն	3	9	417
Արարատ	4	16	703
Արմավիր	7	20	551
Գեղարքունիք	4	15	578
Լոռի	5	21	641
Կոտայք	6	23	651
Շիրակ	5	26	781
Սյունիք	5	15	451
Վայոց ձոր	3	12	299
Տավուշ	3	10	278
Ընդամենը	45	167	5350




Թեկնածուների քանակն ըստ մարզերի
5%
10%
12%
9%
13%
14%
15%
9%
7%
6%
Արագածոտն
Արարատ
Արմավիր
Գեղարքունիք
Լոռի
Կոտայք
Շիրակ
Սյունիք
Վայոց ձոր
Տավուշ


Ըստ ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների
900
800
700
600
500
400
300
200
100
0
Արագածոտն
Արարատ
Արմավիր
Գեղարքունիք
Լոռի
Կոտայք
Շիրակ
Սյունիք
Վայոց ձոր
Տավուշ
թեկնածուների քանակ
ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների քանակ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

18.02.2022Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

			ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների քանակը	**որից**					
Մարզ	համայնքների քանակը	Կուսակցությ. քանակը		Քվեարկ. մասնակց. թեկնածու	Ինքնա-բացարկ	*որից՝ մանդատը վայր դրած*	Հետ է վերցրել փաստաթղթերը	Անվավեր	Մերժված է
Արագածոտն	3	9	417	292	115	*4*	9	0	1
Արարատ	4	16	703	514	186	*5*	3	0	0
Արմավիր	7	20	551	486	63	*4*	1	1	0
Գեղարքունիք	4	15	578	481	78	*3*	18	0	1
Լոռի	5	21	641	606	34	*1*	0	0	1
Կոտայք	6	23	651	576	73	*4*	1	0	1
Շիրակ	5	26	781	675	102	*8*	3	1	0
Սյունիք	5	15	451	400	51	*2*	0	0	0
Վայոց ձոր	3	12	299	265	26	*2*	8	0	0
Տավուշ	3	10	278	252	25	*1*	0	1	0
Ընդամենը	45	167	5350	4547	753	*34*	43	3	4

ԸՍՏ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Մարզ	քվեաթերթիկներում ընդգրված թեկնածուների քանակ							
	1	2	3	4	5	6	7	10
Արագածոտն	0	1	1	1	0	0	0	0
Արարատ	0	1	1	0	1	1	0	0
Արմավիր	1	1	4	0	1	0	0	0
Գեղարքունիք	0	0	3	0	0	1	0	0
Լոռի	0	2	1	1	0	0	0	1
Կոտայք	0	2	0	2	1	1	0	0
Շիրակ	0	1	1	1	0	0	1	1
Սյունիք	0	2	1	2	0	0	0	0
Վայոց ձոր	0	0	1	1	1	0	0	0
Տավուշ	0	1	1	0	1	0	0	0
Ընդամենը	**1**	**11**	**14**	**8**	**5**	**3**	**1**	**2**





Տեղեկատվություն համամասնական ընտրակարգով ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ըստ սեռի

18.02.2022թ. դրությամբ

Մարզ	ընտրական ցուցակներում գրանցված թեկնածուներ		Ընտրված		Մանդատը վայր դրած	
	ար.	Իգ.	ար.	Իգ.	ար.	Իգ.
Արագածոտն	226	66	56	13	3	1
Արարատ	362	152	66	33	4	1
Արմավիր	333	153	111	54	2	2
Գեղարքունիք	350	131	80	28	2	1
Լոռի	408	198	72	39	1	0
Կոտայք	390	186	92	40	3	1
Շիրակ	446	229	74	37	6	2
Սյունիք	269	131	62	31	1	1
Վայոց ձոր	182	83	34	17	1	1
Տավուշ	169	83	48	21	1	0
Ընդամենը	3135	1412	695	313	24	10





Տեղեկատվություն համամասնական ընտրակարգով ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ըստ տարիքի

18.02.2022թ. դրությամբ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	183	31	176	30	58	8
Արարատ	344	51	288	41	71	7
Արմավիր	300	80	206	67	45	18
Գեղարքունիք	245	43	245	55	88	10
Լոռի	346	51	227	52	68	8
Կոտայք	365	69	244	58	42	5
Շիրակ	383	49	303	55	95	7
Սյունիք	248	46	181	47	22	0
Վայոց ձոր	142	17	116	28	41	6
Տավուշ	114	27	135	41	29	1
Ընդամենը	2670	464	2121	474	559	70





Տեղեկատվություն համամասնական ընտրակարգով ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ըստ համայնքների

			ընտրական ցուցակներում գրանցված թեկնածուներ		Ընտրված	
Ընտրության օրը	ՏԸՀ	Համայնք	Արական	Իգական	Արական	Իգական
14.11.21	25	Ստեփանավան	37	18	14	7
14.11.21	35	Կապան	79	39	18	9
14.11.21	38	Իջևան	46	19	19	8
17.10.21	31	Գյումրի	166	96	22	11
17.10.21	34	Գորիս	64	32	14	7
17.10.21	34	Տաթև	39	18	9	6
17.10.21	34	Տեղ	23	6	12	3
17.10.21	35	Մեղրի	64	36	9	6
17.10.21	38	Դիլիջան	64	43	13	8
05.12.21	11	Մասիս	87	42	18	9
05.12.21	12	Արտաշատ	130	52	22	11
05.12.21	13	Արարատ	92	34	18	9
05.12.21	13	Վեդի	53	24	8	4
05.12.21	14	Արաքս	64	28	14	7
05.12.21	14	Վաղարշապատ	63	33	18	9
05.12.21	14	Փարաքար	69	33	14	7
05.12.21	15	Խոյ	36	19	14	7
05.12.21	15	Մեծամոր	34	11	19	8
05.12.21	16	Արմավիր	25	12	18	9
05.12.21	16	Բաղրամյան	42	17	14	7
05.12.21	17	Աշտարակ	76	25	21	6
05.12.21	17	Ապարան	47	0	21	0
05.12.21	18	Թալին	103	41	14	7
05.12.21	19	Գավառ	87	33	18	9
05.12.21	20	Սևան	45	10	25	2
05.12.21	21	Մարտունի	127	46	19	8
05.12.21	21	Վարդենիս	91	42	18	9
05.12.21	22	Սպիտակ	82	39	18	9

			ընտրական ցուցակներում գրանցված թեկնածուներ		Ընտրված	
Ընտրության օրը	ՏԸՀ	Համայնք	Արական	Իգական	Արական	Իգական
05.12.21	23	Վանաձոր	221	117	20	13
05.12.21	24	Թումանյան	39	10	11	4
05.12.21	24	Փամբակ	29	14	9	6
05.12.21	26	Ծաղկաձոր	28	9	11	4
05.12.21	26	Հրազդան	46	25	18	9
05.12.21	27	Նաիրի	107	54	18	9
05.12.21	28	Նոր Հաճըն	59	28	14	7
05.12.21	29	Աբովյան	115	56	19	8
05.12.21	29	Գառնի	35	14	12	3
05.12.21	30	Ամասիա	40	24	6	3
05.12.21	30	Աշոցք	31	14	10	5
05.12.21	32	Ախուրյան	80	37	19	8
05.12.21	33	Արթիկ	129	58	17	10
05.12.21	36	Եղեգնաձոր	61	20	15	6
05.12.21	36	Ջերմուկ	19	13	10	5
05.12.21	36	Վայք	102	50	9	6
05.12.21	37	Նոյեմբերյան	59	21	16	5
Ընդամենը			***3135***	***1412***	***695***	***313***

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով Ընտրական օրենսգրքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված իրավասությունից, սույն հաղորդմամբ միաժամանակ ներկայացվում են ընտրական գործընթացի կազմակերպման բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ որոշ առաջարկություններ՝ նպատակ ունենալով նպաստելու ընտրական վարչարարության բարելավմանը: Մասնավորապես,

1. Ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է. «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները հրապարակվում են հանձնաժողովի համացանցային կայքում սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում, որոնք պահպանվում են մինչև քվեարկության արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտը, իսկ ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով վիճարկելու դեպքում՝ մինչև դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները պահպանության են հանձնվում Հայաստանի Հանրապետության պետական արխիվ՝ սահմանված կարգով պահպանելու համար:»:

Առաջարկում ենք Ընտրական օրենսգրքով հստակ սահմանել ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակայնացումը կարգավորող ընթացակարգերը, մասնավորապես՝ այդ ցուցակների էլեկտրոնային տարբերակի պահպանման, արխիվացման կարգը և ժամկետները, ինչպես նաև ընտրությունների ավարտից հետո դրանց կիրառելիության պայմանները և սահմանափակումները, այդ ցուցակներն (ամբողջությամբ կամ մասնակի) էլեկտրոնային եղանակով ստանալու իրավասություն ունեցող սուբյեկտներին՝ քվեարկության գաղտնիության սկզբունքն ու ընտրողների անհատական տվյալների պաշտպանության հանգամանքն ապահովելու համար:

Հարկ է նկատել, որ այսօր գործող իրավակարգավորումների համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողների սկանավորված ցուցակները ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ընտրողների գրանցման գործընթացի նկատմամբ մոնիտորինգի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ուղեցույցում[6] նշվում է. «...պետք է գնահատվեն այն դրույթները, որոնք սահմանում են, թե ընտրողի մասին ինչ անձնական տվյալներ հրապարակայնորեն կցուցադրվեն ռեգիստրներում, և ինչ նպատակներով են դրանք օգտագործվելու ընտրությունների տարբեր շահագրգիռ կողմերի կողմից: Քաղաքական կուսակցություններին,

[6] ***«Handbook for the Observation of Voter Registration» (OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR)) 13.07.2012, https://www.osce.org/odihr/92058 (հղման ամսաթիվը 11.03.2022թ.)***

քաղաքացիական խմբերին կամ անհատներին, բացառությամբ իրենց՝ ընտրողների, ընտրողների ռեգիստրների և ընտրողների նախնական ցուցակների հասանելիության ապահովման մարտահրավերներից մեկը ողջամիտ հանրային հրապարակման և անձնական տվյալների պաշտպանության միջև ճիշտ հավասարակշռություն գտնելն է: Անձնական տվյալների պաշտպանության միջազգային ստանդարտները ներառում են Եվրոպայի խորհրդի 1981 թվականի կոնվենցիան և Կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը:

Օրենսդրական դաշտը պետք է հստակ սահմանի ընտրողների ռեգիստրի ստուգումից ստացված տեղեկատվության թույլատրելի օգտագործումը և արդյոք տեղեկատվությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, քան ուղղումներ խնդրելը կամ ընտրողների գրանցումը վիճարկելը: Մասնավորապես, օրենքը պետք է սահմանի, թե արդյոք այդ տեղեկատվությունը կարող է օգտագործվել քաղաքական կուսակցությունների և թեկնածուների քարոզարշավի համար: Օրենքում պետք է նշվեն նաև ընտրողների ռեգիստրներից ստացված տեղեկատվության չարաշահման պատժամիջոցները:»:

2. Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար տրամադրվում են տեղեկանքներ. «Ընտրողի տվյալները ժամանակավորապես ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացնելու մասին», «Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողի տվյալները ժամանակավորապես ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանելու և նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում լրացնելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին»: Նշված տեղեկանքների առկայությունը քվեարկության օրն առաջանցում է բարդություններ նման ընտրողների գրանցման գործընթացում, քանի որ այդ տեղեկանքները հաճախ տեղամասային ընտրական հանձնաժողովներում հիմք են ընդունում այդ ընտրողներին քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակում ընդգրկելու համար, մինչդեռ այդ ընտրողներն արդեն իսկ ընդգրկված են հիմնական ցուցակի համապատասխան բաժնում:

Առաջարկում ենք Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ, 3.1-րդ և 5-րդ մասերով սահմանված կարգով ներկայացված դիմումների պարագայում լիազոր մարմինը դիմումը բավարարելու դեպքում դրա վերաբերյալ ծանուցի ընտրողին՝ առանց տեղեկանք տրամադրելու: Նշված առաջարկը նպատակ է հետապնդում ապահովելու տեղամասում քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակի անսխալ կազմումը:

3. Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները և զանգվածային լրատվության միջոցները հավատարմագրման վերաբերյալ դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են

ներկայացնում միայն էլեկտրոնային եղանակով՝ Հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով:

Նույն մասով սահմանվում է, որ հասարակական կազմակերպությունները կարող են հավատարմագրվել և դիտորդական առաքելություն իրականացնել համատեղ: Համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները կարող են հանդես գալ մեկ միասնական անվան ներքո: Համատեղ դիտորդության դեպքում հասարակական կազմակերպությունները ներկայացնում են հավատարմագրման վերաբերյալ համատեղ դիմում և դիտորդների համատեղ ցանկ, իսկ Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների պարագայում թույլատրել միաժամանկ երկու դիտորդ ներկայություն:

Առաջարկում ենք պայմանավորված ընտրական իրավահարաբերությունների ժամկետային առանձնահատկություններով ընձեռել այլընտրանքային հնարվորություն հավատարմագրման վերաբերյալ դիմումները ներկայացնելու նաև թղթային եղանակով:

Համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների պարագայում օրենսդրորեն սահմանել միասնական անվան ներքո հանդես գալու պահանջ՝ հաշվի առնելով համատեղ դիմում և դիտորդների համատեղ ցանկ ներկայացնելու արդեն իսկ սահմանված օրենսդրական պահանջները, ինչպես նաև հստակեցնել համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների, որպես միասնական սուբյեկտ (դաշինք) ձևավորվելու, իրավական կարգավիճակի և գրանցման առանձնահատկությունները: Վերանայել համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների պարագայում տեղամասում միաժամանկ երկու դիտորդի ներկայության օրենսդրական կանոնակարգումը՝ ապահովելով միասնական մոտեցում դիտորդական առաքելություն իրականացնող բոլոր սուբյեկտների նկատմամբ, քանզի նշված իրավահարաբերություններում դիտորդական առաքելություն համատեղ իրականացնող կազմակերպությունները միասնաբար հանդիսանում են մեկ սուբյեկտ: Իրավասությունների սահմանման պարագայում՝ հիմքում, կարծում ենք, պետք է լինի սուբյեկտայնության ինստիտուտը:

4. Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածը նախատեսում է նախընտրական քարոզչությունը համացանցում:

Նկատի ունենալով, որ համացանցով (էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով և այլն) նախընտրական քարոզչության իրականացումը, առավել ևս քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչության արգելքի ապահովումը, բավականին խնդրահարույց է, ավելին՝ այդ դաշտն ուղղակի անվերահսկելի է գործող օրենսդրական կարգավորումների, առկա ռեսուրսների և գործիքակազմի պարագայում:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «3. **Սույն օրենքը չի տարածվում համացանցի**, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա:»:

Թեև, տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է նաև «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոց է համարվում համացանցում սեփական կամ վարձակալած դոմեյն, հոսթինգ ունեցող և «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված տեղեկությունները պարունակող կայքի միջոցով տարածվող լրատվության միջոցը, այդուհանդերձ առկա են մի շարք կարևորագույն հարցեր, որոնց պատասխաններն օրենսդրությունը չի տալիս: Մասնավորապես,

- համացանցով, որը անսահման լայն տարածք է, նախընտրական քարոզչություն իրականացնելու դեպքերում ինչպե՞ս է վերահսկվելու նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը,
- սոցիալական ցանցերի պարագայում, ինչ իրավակարգավորումներ են գործում, ի՞նչ է արվելու հայտնի և կեղծ օգտատերերի պարագայում,
- եթե օգտատերը Հայաստանի Հանրապետության տարածքում չէ, ի՞նչ օրենսդրություն է կիրառվելու (օրինակ՝ հայտնի անձի կոչը արտերկրից սոցցանցերի կամ համացանցի այլ գործիքի միջոցով),
- ինչպե՞ս է վերահսկվելու և ապահովվելու նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը կայքերի արխիվային էջերի պարագայում և այլն:

Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխաններն ունեն էական նշանակություն, հատկապես, երբ նախընտրական քարոզչության իրականացման՝ օրենսգրքով սահմանված կարգի պահպանումն ապահովում են ընտրական հանձնաժողովները և այդ կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով:

Գտնում ենք, որ համացանցով նախընտրական քարոզչություն կատարելու, այն վերահսկելու, առավել ևս սահմանված արգելքների իրականացումն ապահովելու համար, Ընտրական օրենսգրքով և գործող օրենսդրությամբ սահմանված կանոնակարգումները լիարժեք չեն և ունեն լուրջ լրամշակման կարիք:

5. Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանվում են զանգվածային լրատվության միջովներով նախընտրական քարոզչության իրականացման հիմնական սկզբունքերը, որոնք յուրաքանչյուր ընտրության պարագայում կարգավորվում են օրենսգրքի այլ հոդվածներում: Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության և հանրային

ռադիոյի եթերաժամից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից:

Կարծում ենք, որ Ընտրական օրենսգրքում սահմանված կարգավորումները, որոնց համաձայն՝ մասնավոր Հեռարձակողին պարտավորեցվում է տրամադրել անվճար եթերաժամ, ամբողջական չեն: ***Առաջարկում ենք*** Ընտրական օրենսգրքով հստակ սահմանել Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին անվճար եթերաժամ տրամադրելու կարգը և պայմանները:

6. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեությունը 2023 թվականի հունվարի 1-ից պետք է դադարեցվի՝ նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը վերապահելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հարկ է նկատել, որ նախընտրական հիմնադրամներին առնչվող իրավահարաբերություններն ընտրական գործընթացի մաս են կազմում:

Հաշվի առնելով, որ ընտրությունների, հանրաքվեների օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը վերապահված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, գտնում ենք, որ նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը այլ մարմնի վերապահելը կնվազեցնի այդ գործառույթի իրականացման արդյունավետությունը:

Առաջարկում ենք վերանայել սահմանված մոտեցումը:

7. Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով վերահաշվարկի ինստիտուտում առաջարկվում է նոր, արմատական փոփոխություն: Մասնավորապես, քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 11:00-ին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վիճակահանությամբ պատահականության սկզբունքով ընտրում է իր սպասարկման տարածքում գտնվող երեք ընտրական տեղամաս, իսկ 10-ից պակաս տեղամասերի առկայության դեպքում՝ մեկ ընտրական տեղամաս, որտեղ պետք է իրականացնի վերահաշվարկ:

Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից վերահաշվարկների իրականացման հերթականությունը:

Առաջարկում ենք, վերանայել վիճակահանությամբ վերահաշվարկ իրականացնելու ինստիտուտը և սահմանել, որ վերահաշվարկի դիմումի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ վերահաշվարկ կատարելու որոշման դեպքերում վիճակահանությամբ վերահաշվարկ իրականացնելու պահանջը վերացնել, քանզի այն ըստ էության բովանդակազրկվում է: Այսինքն, գործող՝ վիճակահանությամբ ընտրված տեղամասերում վերահաշվարկ իրականացնելու ինստիտուտը կիրառել բացառապես այն դեպքերում, երբ առկա չեն

վերահաշվարկի վերաբերյալ դիմումներ և/կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ չի իրականացնելու վերահաշվարկներ:

Վերահաշվարկի ինստիտուտի նախատեսումը և դրա իրականացման մեխանիզմների սահմանումը չի կրում ինքնանպատակ բնույթ: Վերահաշվարկի դիմում ներկայացվում է այն դեպքում, երբ այդ իրավունքից օգտվող՝ ընտրական գործընթացի այն մասնակիցները, ովքեր ունեն ուղղակի սուբյեկտիվ շահեր, մասնակացել են, ներկա են գտնվել տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, արձանագրել են իրենց կարծիքով թույլ տրված խախտումները, նկատել են սխալ իրականացված հաշվարկը և արդեն իսկ ունենալով լիակատար պատկերացում տեղամասում իրականացված հաշվարկի վերաբերյալ և վերահաշվարկի միջոցով, ըստ էության, նպատակ են հետապնդում արձանագրելու կամ վերացնելու այդ խախտումները: Նշյալի հաշվառմամբ ***առաջարկում ենք*** առաջին հերթին վերահաշվարկ իրականացնել դիմումների հիման վրա, երկրորդ հերթին՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Առաջարկում ենք ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջ ներկայացնելու իրավունք վերապահել նաև վերադաս ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու կլինի պատճառաբանված որոշմամբ պահանջելու ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացնել որոշումը ստանալուց անմիջապես հետո՝ առանց հերթի:

8. Ընտրական օրենսգրքի 69-րդ հոդվածում ներմուծվել է քվեաթերթիկների անվավերության նոր հիմք, այն է՝ քվեաթերթիկն անվավեր է, եթե ծրարում, քվեաթերթիկից բացի, առկա է այլ իր: Նշված հիմքը լուրջ ռիսկեր է պարունակում, թե իրավական, և թե պրակտիկ կիրառման տեսանկյունից և կարող է լուրջ չարաշահումների առարկա դառնալ, օրինակ՝ հանձնաժողովը որոշի այդ եղանակով անվավեր ճանաչել քվեաթերթիկները: Նախ, կարծում ենք, անթույլատրել է ընտրողի քվեի նկատմամբ նման մոտեցումը: Եվ երկրորդ, եթե անգամ ծրարում առկա է այլ իր, այդուհանդերձ քվեաթերթիկում ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա, ապա նման քվեաթերթիկը չի կարող տեսակավորվել անվավեր քվեաթերթիկների հետ, իսկ քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ դատական կարգով բողոքարկման ժամանակ ինչպե՞ս է հաստատվելու այլ առարկայի առկայության հանգամանքը, քանի որ ապացուցման տեսանկյունից դա ուղղակի անհնար է լինելու: Ավելին, այլ իրի առկայությունը որպես փաստական հանգամանք կարող է գնահատվել վերադաս ընտրական հանձնաժողովի կողմից ընտրության արդյունքների գնահատման տեսանկյունից:

Առաջարկում ենք, վերացնել սահմանված նոր հիմքը:

9. Առաջարկում ենք նոր ինստիտուցիոնալ մոտեցում տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների համար սահմանված ժամկետների հարցում: Գործող կանոնակարգումների համաձայն, օրինակ,

տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների ժամանակ ընտրական տեղամասերը դեռևս չկազմավորված Կենտրոնական ընտրական հանձնաժողով պետք է ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը (Հոդված 44, մաս 6): Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ թե հերթական, թե արտահերթ ընտրությունների միջոցով ձևավորվող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը նույնն է, ինչպես նաև հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարման մարմինների թե հերթական, թե արտահերթ ընտրություններն անցկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված օրերին, ուստի ***առաջարկում ենք*** ամբողջությամբ վերանայել արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման կարգն ու ժամկետները՝ դրանք համապատասխանեցնելով հերթական ընտրությունների համար սահմանված ժամկետներին:

10. Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ներմուծվել է նոր ինստիտուտ՝ ընտրական ցուցակները համալրելու ինստիտուտը: Այն է, եթե ընտրություններում առաջադրվել է միայն մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա նրան հնարավորություն է տրվում մինչև ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը համալրելու թեկնածուների ցանկը, եթե նրանց թիվը պակաս է ավագանու անդամների համար սահմանված թվից, և երկրորդ դեպքը, եթե ընտրություններում առաջադրված կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է ավագանու անդամների համար սահմանված թվից, ապա նրանց հնարավորություն է տրվում համալրելու թեկնածուների ցանկը:

Նշված ինստիտուի կիրառումն ապահովող կանոնակարգումները խիստ թերի են: Այս ինստիտուտի ներդրմամբ նաև խախտվում է Ընտրական օրենսգրքով սահմանված առաջադրման և գրանցման փուլերին ներկայացվող ընդհանուր մոտեցումը:

11. Ընտրական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը, որի 1-ին կետի համաձայն՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր է ճանաչվում, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հետևանքով ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը նվազել է Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված թվից:

Մինչդեռ, Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածը (2-րդ մաս) սահմանում է «թվին» վերաբերելի մի քանի իմպերատիվ պահանջներ, այն է՝ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների նվազագույն թիվը (չպետք է պակաս լինի համայնքի

ավագանու անդամների՝ սույն օրենսգրքով սահմանված մանդատների թվի 1/3-ից), ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների առավելագույն թիվը (չի կարող գերազանցել համայնքների ավագանիների անդամների մանդատների թվի համար օրենսգրքով սահմանված թվի եռապատիկը), ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը (չպետք է գերազանցի 70 տոկոսը), ընտրական ցուցակում այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցություններից ոչ մեկի) անդամ չհանդիսացող անձինք թիվը (որը չի կարող գերազանցել այդ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը), բազմաբնակավայր համայնքի ընտրություններին դեպքում ընտրական ցուցակում պետք է ընդգրկվեն տվյալ համայնքը կազմող բնակավայրերի առնվազն կեսը ներկայացնող թեկնածուներ:

Ընտրական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի նման, ոչ բավարար հստակ սահմանումը անհարկի բարդացնում է նշված նորմի կիրառման հնարավորությունը: **Առաջարկում ենք** իրավանորմը հստակեցնել և հստակ սահմանել ընտրական ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը:

12. Ընտրական օրենսգրքի 140-րդ հոդվածը տարբերակված մոտեցում է սահմանում 70.000 և ավելի ընտրող ունեցող և մինչև 70.000 ընտրող ունեցող համայնքներում քվեարկության ժամանակ կիրառվող քվեաթերթիկների ձևի հարցում:

Առաջարկում ենք տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների ժամանակ կիրառել առանձին քվեաթերթիկներով քվեարկության միասնական մոտեցում: